



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ՀՈԳԵՐԱՆՁԱՍՏԵԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ՕԴԱՆԱԻ ԱՐԿԱԾԻ ՉՈՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

Ինչպես ծանօթ է, Կիրակի, 19 Յուլիսին, Վարդավառի տօնին օրը, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթացս Ս. Պատարագի, Տէր Ողորմեայի յատուկ աղօթք պիտի բարձրացուի ի յիշատակ Չորեքշաբթի, 15 Յուլիսին, Իրանի հիւսիսային շրջանին մէջ պատահած օդանաւի աղետալի արկածի զոհերուն:

Արդ, նկատի ունենալով, որ այդ օրը մեր եկեղեցւոյ տաղաւար տօներէն է ու կարելի չէ հոգեհանգիստ կատարել, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Երկուշաբթի, 20 Յուլիսին, Վարդավառի տօնի մեռելոցին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կէսօրէ առաջ ժամը 11-ին տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան յատուկ պաշտօն, արկածին անմեղ զոհերուն հոգիներուն համար:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, որ ներկայ ըլլայ հոգեհանգստեան արարողութեան ու աղօթակից ըլլայ զոհերուն յիշատակին:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

**SPECIAL REQUIEM SERVICE FOR VICTIMS OF
THE IRAN PLANE CRASH**

As previously reported, on Sunday, July 19th, 2009, special prayers will be offered in all Prelacy Churches during Divine Liturgy for the victims of Wednesday's plane crash in northern Iran.

Given that no requiem service can take place on Sunday since it is the Feast of the Transfiguration, one of the main feasts of the Armenian Church, by the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, a special requiem service will take place on Monday, July 20th, at St. Mary's Church in Glendale. The service will begin at 11:00 a.m.

We invite our faithful to attend the service and join the community in offering prayers for the souls of the victims.

Western Prelacy Secretariat